կութեան նորին, [1]զոր ի սաստկանալ ամբարշտութեան հերձուածոյն, որ յԵզրէ տարածեցաւ ընդ բոլոր աշխարհս Հայոց՝ արուեստ կործանման աղանդոյն նորա[2]: Զխմոր եւ զջուր[3] յաստուածային խորհրդոյն որոշեսցուք՝ զպատճառս ապականութեան մարմնոյն Քրիստոսի եւ զանջատման ի Բանէն Աստուծոյ, լիցուք վրիժառուք յաստուածային պէտս յանապականութեան:

Յայսմ հետէ կէտ եդեալ՝ մի՛ ոք իշխեսցէ խառնել խմոր եւ ջուր յանապական խորհուրդ մարմնոյ եւ արեան Տեառն, զի նոյն ինքն անապական[4] հացին ամրացեալ լինի սուրբ խորհուրդն, զի մի՛ եւս բազմացեալ լիցի աղանդ երկաբնակ խոստովանութեանն[5]: Ատանաւր ծածկեալ կորուսցուք անյիշատակ՝ զխմոր եւ զջուր բառնալով յաշխարհէս Հայոց, զի թերեւս կործանեսցի աղանդ ապականութեան հերձուածոյն Քաղկեդոնի եւ անապականութեամբ կատարեսցի[6] սուրբ խորհուրդն Տէրունական:

Այս կանոն եւ գիր եղիցի՛ խոստովանութեան հաւատոյս մերոյ[7], եւ այս եղիցի՛ աւանդ ամենեցուն մեզ՝ Հայաստանեայցս[8]: Եթէ եպիսկոպոս կամ երէց կամ կրաւնաւոր[9] խմորով խորհուրդ կատարեսցէ, այնպիսին ի մեզէ նզովս ընկալցի՛[10] եւ կրեսցէ՛ պատուհաս սաստիկ եւ անհնարին: Արդ՝ զայս հնարեսցուք հիմն եւ պարիսպ ամրութեան ընդդէմ հերձուածոյն Քաղկեդոնի:

Իսկ այժմ[11] կէտ եդեալ՝ ի բաց խզեսցուք զխորհուրդ երկաբնակացն, որք ապականեալ գոլ ասեն զանապական մարմինն Տէրունական: Եւ արդ՝ անապական հացին հրամայեմք կատարել զփրկագործ մեղսաքաւիչ խորհուրդն, եւ[12] հիմն արկեալ՝ ճառս յաւրինեսցուք[13] եւ հնարեսցուք վկայս հաստապատճառս եւ բազմաբանս, բնագիւր բաղդատութեամբ, եւ մարգարէափակ[14] ամրապնդեալ՝[15] գրեսցուք պատճէնս հաւատոյ[16] յաւանդութիւն խոստովանութեան վիճակիս մերոյ[17] եւ ծածկեալ ի բաց կորուսցուք զբնութիւն խառնուածոյն ապականութեան[18], եւ ճառաբանեալ անապականաբար՝ խաւսեսցուք ընդդէմ այնոցիկ, առ ի մոռանալ զխառնումն ապականութեան, անյիշատակաբար որոշեալ, եւ սեպհականեսցի՛ ամենայն[19] կրաւնս Հայոց, եւ կործանեսցի՛ չար աղանդն[20] նոցա[21]:

[22]Նաեւ զպահս Առաջաւորացն[23] ի սուրբ պահս Քառասնորդացն[1] կարգեսցուք: Եւ զշա-

---

1 a չիք *զոր ի...սուրբ Պասեքին* (eii$_1$m) (եօթանասունչորս տող. պատճառն Անտոնեանց վանքի գրչագրի մայր օրինակում թերթի (կամ թերթերի) կորուստն է եղել: Հ. Ն. Պողարեանն իր տպագրում լրացրել է պակասը i-ից):

2 e չիք *նորին, զոր...նորա* (ii$_1$m) (չորս տող)

3 e *զջուրն* փխ *զջուր* (ii$_1$m)

4 m *յանապականէն* փխ *յանապական... անապականն* (ii$_1$) (երկու տող)

5 m *խոստովանութեան* փխ *խոստովանութեանն* (ii$_1$)

6 i *կատարեսցէ* փխ *կատարեսցի* (i$_1$m)

7 m *մերո*

8 i$_1$m *Հայաստանեացս* / e *Արդ* փխ *լիցուք վրիժառուք...Հայաստանեայցս* (ii$_1$m) (քսան տող)

9 e *այսուհետեւ ոք* փխ *եպիսկոպոս կամ...կրաւնաւոր* (ii$_1$m)

10 e *նզովեալ եղիցի՛* փխ *այնպիսին ի...ընկալցի՛* (ii$_1$m)

11 m *այժ*

12 i$_1$ չիք *եւ* (im)

13 i *օրինակեսցուք* փխ *յաւրինեսցուք* (i$_1$m)

14 m *մարգարէփակ*

15 i$_1$m *ամրապնտեալ* փխ *ամրապնդեալ* (i)

16 m *հաւատոյն* փխ *հաւատոյ* (ii$_1$)

17 m *մերո*

18 i *ապականութեանց*, i$_1$ *ապականութեանս* փխ *ապականութեան* (m)

19 i չիք *ամենայն* (i$_1$m)

20 i$_1$ *մի հիոցն* փխ *աղանդն* (im)

21 e չիք *Արդ՝ զայս...նոցա* (ii$_1$m) (քսաներկու տող) (հմմտ. նաեւ էջ 116, ծան. 18)

22 s *Եւ զձէթ եւ զձուկն եւ զգինի հանեալ ի սուրբ Խ-ասնորդացն՝ զուգաւորեցին զթան, զձէթ եւ զգինի ի շաբաթու եւ զկիւրակէի՝ միայն վասն անասնաբարոյ հեշտասէր եւ որովայնամոլ մարդկան հնարեալ զայս, զի միայն ի հերձուածողացն, որ են Յոյնք ըստ Քաղկեդոնի եւ Լեւոնի, զատուցեն զՀայս: Եւ զԱռաջաւորն հաստատեցին՝ թուելով ընդ Քառասունն սուրբ Զատկին* փխ *Նաեւ ...ցՊենտեկոստն ուտել* (aeii$_1$) (երկու հարիւր եօթանասունչորս տող):

23 i$_1$ *ետ եւ փրկացն* փխ *Առաջաւորացն* (eii$_1$m)